«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի

ՈՐՈՇՈՒՄ

21 Դեկտեմբերի 2022, N 3 - 3 (հարցման կարգով)

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան ընդունված, բանակ զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունը դադարեցրած, ժամկետից շուտ զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242 - Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676 - Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանող Գեորգի Վիլիելմի Բաբուրյանի ուսանողական իրավունքները վերականգնելու մասին

Լսելով և քննարկելով՝
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի 2020 թվականի հոկտեմբերի 2-ի N ՈՒՄ /84/ 8-Ա հրամանով 2020-2021 ուսումնական տարում համալսարանի հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտության «Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 1-ին կուրս ընդունված (վճարովի հիմունքներով), բանակ զորակոչվելու կապակցությամբ ռեկտորի 2021 թվականի փետրվարի 9-ի N ՈՒՄ /16/ 14-Ա հրամանով 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կուրսի 1-ին կիսամյակից ուսումնառությունը դադարեցրած, 2022 թվականի հուլիսի 20-ին զորացրված («Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «դ» ենթակետի և 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն արձակվել է ՀՀ ԶՈՒ պահեստազոր) և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676-Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ (23.11.2022 թ.) դիմած ուսանող Գեորգի Վիլիելմի Բաբուրյանի ուսանողական իրավունքները 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում վերականգնելու մասին հարցը:

Հիմք ընդունելով, որ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2022 թվականի հունվարի 26-ի N 05/11.2/548-2022 գրությամբ առաջարկվել է ազգային բանակ զորակոչվելու կապակցությամբ

ուսումնառությունը դադարեցրած և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676-Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանողների ուսանողական իրավունքների վերականգնման հարցը քննարկել համալսարանի գիտական խորհրդի նիստում՝ հաշվի առնելով, որ Գեորգի Վիլհելմի Բաբուրյանի հայրը զոհվել է արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում, ինչպես նաև այն հանգամանքը, որ սահմանված ժամկետում իր ուսանողական իրավունքները վերականգնելու համար նա չի դիմել համալսարան, քանի որ զինկոմիսարիատից տեղեկանքը տրվել է 2022 թվականի նոյեմբերի 18-ին՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Գեորգի Վիլհելմի Բաբուրյանի ուսանողական իրավունքները վերականգնել** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտության **«Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի բակալավրիատի առկա վճարովի ուսուցման համակարգի 1-ին կուրսում 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակից:**

   Հաշվի առնել, որ Գեորգի Վիլհելմի Բաբուրյանը մինչև բանակ զորակոչվելը (18.02.2021 թ., ռեկտորի հրաման N ՈՒՄ /16/ 14-Ա, 09.02.2021 թ.) հանձնել է 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կուրսի 1-ին կիսամյակի քննաշրջանում կրթական ծրագրով նախատեսված բոլոր դասընթացների ստուգարքներն ու քննությունները:

2. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2022 թ. դեկտեմբերի 21
Երևան